# ԼՐՈՅ ԳԻՐ

## ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱԹԱՋԻՆԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԵՐ 33

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ՅՈՒԼԻՍԻ 15։ ՈՐ Է ՌՄԽԸ ՍԷՖԷՐԻ ԺԶ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ։


## ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Բարեխնամ Ինքնակալն մեր որ Է երկայն աւուրս կեցցէ, իր արքայական մեծաւոր ծառայներէն միւշիրի խասսա վէզիր Ահմէտ Ֆէվզի փաշայն՝ և ֆէրիգի խասսա Ահմէտ Ֆէթհի փաշայն հետը առնելով, սէֆէրի ամսոյն 13 ին չորեքշաբթի օրը՝ իր բժշկապետ Մուստաֆա պէհճէթ էֆէնտիին՝ Պէպէքի մօտը եղած ծովեզերեայ բնակարանը գնաց։

Նոյն յետոյ իր Թագաւորուն բարեբաղդ որդիքը՝ Սուլթան Ապտիւլմէճիտ և Սուլթան Ապտիւլազիզ էֆէնտիներն ալ հոն բերել տուաւ. ինչպէս որ վէզիրքէհեասի Փէրթէվ էֆէնտիին՝ և տէֆթէրտար Ալի պէկին ծովեզերեայ բնակարաններն յառաջմանէ գացած առեններն ալ բերել տուած էր։

Նոյն հրամանով Ինքնակալին Գայմագամ փաշայն, և Սէրասքէր փաշայն, և իր հրամանատարութեան տեղը երթալու պատրաստուած տեսնող Թըրհալայի գաւառին բդեշխ՝ Մուստաֆա Նուրի փաշայն, և այժմեան Բումէլիի գազէսքէր խալիլ համիտ փաշայզադէ Արիֆ պէկ էֆէնտին, և Բումէլիի գազէսքէրի աստիճան ունեցող՝ այժմեան Արքային ատչէն իմամ Զէյնէլ ապիտին էֆէնտին, և Վէզիրքէհեասին, և Տէֆթէրտար և Րէյիս էֆէնտիները, և արքունի վագըֆներու Նազըր հաճի Սայիտ էֆէնտին, և ղարպխանէի նազըր Լաֆիզ էֆէնտին, և մուգաթաաթի նազըր Մէհէմէտ էֆէնտին, և մէաարիֆաթի նազըր հաճի Սաիտ էֆէնտին, ասոնք ամէնն ալ այս խորախճանարանը գըտնըվելով ուրախացան։

Նոյն ռուսմերուն (իւվարլախներուն) գործքը կատարելու և՛ի գործ դնելու համար՝ հրամանատարութեամբ Սամսգօձուք ըսված տեղը գացող Թօփճի փաշայն ալ՝ այս անգամ արքայանիստ քաղաքը եկած ըլալով, այն ալ 'ի միասին հոն գըտնըվէր է։

Նոյն Թագաւորուն որդիքը՝ երգեցիկներուն (խանէնտէներուն) ձայնը լսելով, և մէկ քանի զուարճալի բաներ տեսնալով, որտեղնին բացվելէն յետոյ՝ Արքային հրամանով իրիկվան մօտ ետ դարձան. բայց միւս ներկայ գըտնըվօղները՝ այն գիշերը հոն մնացին. և ամէնն ալ Արքային ոտքը համբուրելով փառաւորվեցան։

Նոյն արքունի պալատէն եկած՝ յիշեալ

ի

բժշկապետին փոքր եղբայրը Նըճէտա էֆէնտին, և Թոռը Միւտէրրիս սէյիտ Մէհէմէտ Աթաուլլահ էֆէնտին, և իր միւս եղբօրը Րաղիպ Հաք էֆէնտիին ալյան միւտէրրիս Խայրուլլահ էֆէնտին, Ինքնակալն իր ընական ունեցած գթութիւը՝ անոնց ալ իր առջևը գալերնուն և ոտքը համբուրելով փառաւորվելնուն հրաման ըրաւ։

Ասոր այս կերպով՝ թէ անոնք և թէ բժշկապետը կրկնապատիկ փառաւորվեցան. և միւս օրը Արքայն իր պալատը ետ դառնալու ատենը՝ նաև ամէն մէկը զատ զատ արքայական գթութեամբ լեցվեցան. մանաւանդ Ինքնակալն՝ փոխանթի քարերով զարդարված իր թագաւորական մէկ պատկերն ալ՝ յիշեալ որդւոյն բժշկապետին շնորհելով աւելի փառաւորեց։

Նաև վերյիշեալ Արիֆ պէկը ամէն կողմանէ պատւոյ արժանաւոր անձ մը ըլլալէն 'ի զատ՝ յառաջմանէ ալ գտնըված սափձաններուն մէջը գտնվելէ բարբը տեսնված էր. և այս անգամ նոյն Արիֆ պէկ էֆէնտին ալ Թագաւորին աղաչեց, որ իր ծովեզերեայ բնակարանն ալ գալովը փառաւորէ. և անոր ալ աղաչանքը ընդունելով, այսուհետև անոր ծովեզերեայ բնակարանն ալ երթալը խոստացաւ։

Նաև ասկէ 'ի զատ Ինքնակալն երբոր նոյն Արիֆ պէկ էֆէնտիին հետ կը խօսէր, անոր գաղեպերուն ժամանակաւոր սափձանին կատարումը՝ որ առաջակայ ըեպիլ եկվելը ամսոյն վերջն էր, նոյն ժամանակին վրայ երեք ամիս ալ վերադիր ըրաւ։

Ասոր նոյն էֆէնտին ալ՝ Արքային երջանիկ կենացը երկարութեանը համար բարեմաղթութիւն ըրաւ։

Յիրաւի բոլոր իր հաւատարիմ ծառայներուն ուրախութիւն և ցնծութիւն կամեցող Ինքնակալին այս երջանիկ ժամանակը գտնըւօղ իր բոլոր ծառայները՝ անոր յարգը ճանաչելով, իւր գոհութիւն տալու պարտաւոր են։

Այս քաղցրաղթ Արքային հզօր տէրութիւնը արեգական պէս՝ մինչև 'ի կատարած աշխարհի բոլոր ծառայներուն վրայ հովանի ըլլայ. և անոր գթութեան աչքը՝ բոլոր ըայեաներուն վրայ պահապան ըլլայ, ամէն։

---

Թ.ըրհալայի դատաւորին բժիշկ Մուստաֆա Նուրի փաշային հետը գանձապետութեան գրիցօղ՝ այս անգամ խասօտայէն չըրախ եղած Շիւքրի էֆէնտին՝ գիտուն անձ մը ըլլալուն համար՝ խօճակեանութեան արժանաւոր եղած էր։

Այս հրամանով Թագաւորին հարեմիյէնի մուգաթաճիութեան սափձանով որդւոյն դիվանին խօճակեանութեան շնորհվեցաւ. և սէֆէրի ամսոյն 7 ին հարկ եղած հարվանին հաղցնելով, արքայական Բուռան ալ պարգևեցաւ։

---

Ողորմութիւն ոյ և բարի ջանացողութեամբ Ինքնակալին՝ ասկէ յառաջ պատրաստված և ձերմակ ծովը խրկված որդւոյն նաւատորմիղը (տօնանմա) խաղաղութեամբ Րոտոս հասեր է։

Նաև Իսկէնտէրունի և Միւտէլլիի ծովեզերքը խրկվելու համար՝ նոյն նաւատորմիղին հետը եղած զախիրէի՝ և պատերազմական միւհիմմաթի նաւերը՝ Գափուտան փաշային կարգադրելով, և անոնց հետը նաւատորմիղէն բաւական պատերազմական նաւեր զատելով խրկեր է։

Նաև ինք ալ նոյն նաւատորմիղը իր հետը առնելով, անոնց ետևէն հարկ եղած տեղը երթալը՝ իր կողմանէ սէֆէրի ամսոյն 9 ին գրված և արքայանիստ քաղաքը եկած թղթերուն մէջը յիշված է։

---

Բաբելօնի այժմեան բդեշխ Ալի փաշային՝ յառաջմանէ գանձապետը եղող Նամիր պէկը, որ նախկին Բաբելօնի բդեշխը արքայանիստ քաղաքը բերելու պաշտօնատարութեամբ խրկված էր. նոյն Նամիր պէկը ընական խոհեմ ըլլալուն համար՝ տէրութեան պաշտօններու մէջ գտնըւելու արժանի էր։

Յետոյ հրամանով Ինքնակալին անոր ղափուճիպաշլուն աստիճան շնորհվեցաւ. և յիշեալ ամսոյն 11 ին կափթան հագցնելով արքայական Բույուրուլտուն ալ պարգևեցաւ.

---

Արքունի նաւատորմիղը դեռ չը դարձած՝ Թագաւորական փալթուօնային Սիլէյման կափուտանը մեռած էր. անոր համար նոյն նաւատորմիղին մէջը գտնըվող պաշտօնատարներէն յարմար մէկը ընտրել՝ և անոր տեղը դնելը՝ Կափուտան փաշային յանձնըվեցաւ։

Եւ արքունի նաւատորմիղին հետը գըտնըվող՝ նախկին փալթուօնային Պուրսացի Խօճէր կափուտանը՝ գործունեայ և զօրեղ ըլլալով, և յառաջմանէ ալ այս պաշտօնին մէջը գտնըված ըլլալուն պատճառաւ, նոյն փալթուօնային կափուտանութիւնը անոր շնորհվիլը՝ Կափուտան փաշայն պատշաճ տեսաւ։

Յետոյ հրամանով Ինքնակալին կարգված ռոճիկներովը և ապրուստներովը՝ նոյն փալթուօնային կափուտանութիւնը՝ յիշեալ Խօճէր կափուտանին շնորհվեցաւ. և սէֆէրի ամսոյն 17 ին՝ պէտք եղած հրովարտակը՝ Կափուտան փաշային խըրկըվեցաւ.

---

## ԳՈՐԾՔ ԶՕՐԱՑ

Մանսուրէ զօրքերուն շատնալուն համար օրըստօրէ Ինքնակալին ըրած բարեկարգութիւնները յայտնի է. Եւ ասկէ յառաջ ալ Պէկօղլուի մէջը եղած՝ ձիաւոր Մանսուրէ Թօփճի զօրքերուն ձմերանոցին մեծնալուն և նորոգվելուն համար հրաման ըրած էր. հիմա այն շինվածքին կատարումը հասաւ։

Յետոյ բարեխնամ Արքայն իր զօրքերուն վրայ կրկնապատիկ գթութիւներ ցոյց տալու դիտաւորութեամբ՝ սէֆէրի ամսոյն 21 ին հինգշաբթի օրը՝ մուշիրի աստիճանի խասսա Ահմէտ Ֆէվզի փաշային, և Ֆէրիգի խասսա Ահմէտ Ֆէթհի փաշային, և երկրորդ միրլիվա Նամիգ փաշային, և արքայական ծառայութեան մէջ եղող Րիզա էֆէնտիին, և Մէհէմէտ ալի պէկը, և արքունի Թօփճիի միրալայ Մուստաֆա պէկը, և արքունի զօրքերուն երկրորդ լիվային՝ առաջին գունդին միրալայ Ահմէտ պէկը, ասոնք ամէնն ալ իր հետը առնելով, նոյն նորաշէն ձըմերանոցը գնաց։

Եւ ձիաւոր Թօփճիներէն գունդ մը զօրքեր այն տեղը իրենց կըրթութիւնին ցոյց տըվին. և յետոյ Թագաւորական բերդերուն Թօփճիներէն Րուսճուքի և Նիկէպօլիի Թօփճիները՝ որ իրենց վերաբերեալ կըրթութիւնը սորվելու համար Թօփխանան եկած էին, անոնք ալ կրակով կըրթութիւնին ցոյց տըվին. և արքայական գթութեանը արժանի եղան։

Այս վեհափառ Ինքնակալն որոյ Թագաւորութիւն մշտնջենաւորեսցի, մեծափառօք նոյն ձմերանոցէն՝ Օքմէյտանիին կողմը երթալու ատենը, բարևելու պատճառով կարգաւ կանգնած՝ ձիաւոր և հետևակ Թօփճի և Խումպարաճի զօրավար և զօրք ծառաներուն հաւասարապէս բաժնելու համար՝ Թօփճի փաշային և Թօփխանէի նազըր էֆէնտիին լեցուն ասպրակ մը ոսկի պարգևեց. և այս կերպով ալ նոյն զօրքը կրկնապատիկ արքայական պարգևաց արժանի ըլլալով, միաբերան՝ Արքային օրհնութիւն տըվին։

Եւ յիշեալ Թօփճի փաշային և Նազըր էֆէնտիին ալ՝ իրենց պաշտօնատարութեան մէջը ունեցած ջանքերնին և յառաջադիմութիւնին օրըստօրէ աւելցընելու համար՝ Արքայն մէկ քանի պատվէրներ ըրաւ։

Ինքնակալն Օքմէյտանիին եղած իր ամարանոցը (քէօշկը) նստած ատենը, Խումպարախանէէն՝ Պէկօղլուի յիշեալ ձմերանոցը բերված՝ Մանսուրէ զօրքերուն ժամը 6 ին արևին ջերմութեան ատենը՝ Պէկօղլուէն Խումպարախանէն խըրկըվելնին տեսաւ. որովհետև Մանսուրէ զօրքերուն արևին ջերմութեան ատենը՝ առանց հարկաւորութեան թէ կրթութեան և թէ ուրիշ ռէջմը

չխըլկըլվէլնին արքայական կանոնագրքին մէջը գրված էր. և նոյն զօրքերուն անանկ ամէնը իրենց ձմերանոցը խըրկըլվիլը հարկ եղած չէր։

Ուստի այսուհետև վերջիշեալ կանոնագրքին կերպովը վարվելու համար՝ նոյն զօրքերուն գնդապետ դըռնըլվօղ Խուլէլ պէկին հասկցնելու պատճառով՝ Ինքնակալին կողմանէ իսկոյն Ֆէթհի Ահմէտ փաշային խըրկըլվեցաւ։

Ապա այս կերպովս Թագաւորն՝ իր կարգադրեալ տեսակ տեսակ զօրքերուն վրայ ունեցած խնամքը յայտնի ըրաւ։

—

Ասկէց յառաջ տըպված Լրոյ գրին մէջը ինչպէս որ յիշված էր. Առաջին միրլիվա Սալիհ փաշային, և անոր լիվային ներքևը գտնըլվելու ձիաւոր մանսուրէ զօրաց գունդերուն միրալայ Ալի պէկին, անոնց պաշտօնատարութիւնը զատ զատ հարկ եղած հրովարտակները տըրվելու համար՝ Սերասքեր փաշային իր գրութիւնը Ինքնակալին հրամանը խնդրած էր. այժմ հրամանով Արքային նոյն հրովարտակները՝ Սերասքեր փաշային կողմանէ անոնց տըրվեցաւ։

Եւ սէֆէրի ամսոյն 15 ին՝ նոյն Սալիհ փաշային՝ յիշեալ գունդին հետ՝ Թօփխանէն ամբողջ պատերազմական պիտոյքներ և պատրաստ ձիաւոր Թօփճի մանսուրէ զօրքեր կարգի դըրվելով, Անատօլուի արքունի բանակին ընդհանուր հրամանատարին հետը գըտնըլվելու համար՝ այն կողմը խըրկըլվեցաւ։

—

Արքունի ձիաւոր գունդերէն միրալայ Շէրիֆ Պէկին կառավարութեանը ներքևը եղած երկրորդ գունդը՝ սէֆէրի ամսոյն 20 ին չորեքշաբթի օրը՝ յաջողութեամբ Բարձրելոյն՝ հրամանատարութեամբ Անատօլուի կողմը որ պիտի երթար. Ինքնակալն ալ՝ նոյն գնդապետին՝ և անոր հետը եղած գունդին տեղապահին՝ և հազարապետին՝ և ուրիշ զօրավարներուն՝ և զօրքերուն վրայ գթութեան ընելու և անոնց ունեցած ջանքը կըկնապատկելու դիտաւորութեամբ՝ նոյն օրը ժամը 4 ին մեծաւ փառօք՝ Օսմանփաշայի ըսված այգիին զուարճալի տեղին մէջը եղած իր ամարանոցը գնալ կամեցաւ։

Ուստի Սերասքեր փաշային քիչմը յառաջ նոյն տեղը գնաց. թէ յիշեալ գունդը՝ և թէ բարեմաղթութիւն ընելու համար Սելիմիյէի Թագաւորական ձմերանոցին մէջը եղած արքունի հետևակ զօրքերուն՝ երկրորդ լիվային գունդերէն՝ երկու Թափօր արքունի զօրքերը՝ Հայտար փաշայի դաշտին մէջը կարգի դըրաւ։

Եւ երբ Ինքնակալն եկաւ, իր Սերասքերին հետը նոյն քաջայաղթ զօրքերուն զօրավարները և զօրք ծառաները բարևելով ուրախացուց. և անոնք ալ միաբերան կեցցէ Արքայն մեր ըսելով բարեմաղթութիւն ըրին։

Եւ Ինքնակալն այն ամարանոցը նստելէն յետոյ՝ նոյն գունդը այն տեղին առջևը բերված կարգաւ կանգնած ատեննին, մեծաւ փառօք ձինք հեծաւ. և ապա Սերասքեր փաշային, և միւշիրի աստիճանի խասսի շահանէ Ահմէտ Ֆէվզի փաշային, և Ֆերիգի խասսա Ահմէտ Ֆէթհի փաշային, և միրլիվայ Նամըգ փաշային, անոնք ալ հրամանով Արքային՝ իրենց ձիերը հեծան. և նոյն գունդին իմամն ալ Թագաւորին երջանիկ կենացը երկարութեանը և զօրացը յաջողութեանը համար՝ բարեմաղթութիւններ ըրաւ։

Ապա Ինքնակալն օրհնութիւն տալով ըսաւ. Աստուծով անոնք ալ ուրիշ իմ քաջայաղթ զօրքերուս հետ մէկ տեղ՝ իրենց յաջողութեան համար քաջութեամբ ջանք և ծառայութիւններ կընեն. և ամենն ալ իրենց մեծ պարծանքը եղած նշաններուն արժանի ըլլալով յաղթութեամբ և ցնծութեամբ ետ կը դառնան կուգան։

Եւ երբ Սերասքեր փաշային ալ այս բանը՝ նոյն զօրքերուն իմացուց, ամէնը միաբերան կեցցէ Արքայն մեր՝ և մեր Ինքնակալին համար անձերնիս դըրերնիս ըսելով, իրենց ծառայական պարտաւորութեանը շնորհակալութիւնները մատուցին։

Եւ յետոյ յիշեալ գնդապետը, և նոյն

գունդի տեղապահ Մուխթար պէկը, և անոնց հետը եղող երկու հազարապետները, Արքային ոտքը համբուրեցին. և Թագաւորանէն շատ պարգևներու ալ արժանի եղան։

Եւ յաջորդ օրն ալ երբ սկսեցին իրենց հրամանատարութե կողմը գնալ, Ինքնակալն կրկին իր խնամքը յայտնելու դիտաւորութեամբ՝ նոյն գունդին հետ քիչմը ալ յառաջ գնաց. և այս կերպով ալ իր զօրքերը առաւել ուրախացընելէն յետոյ՝ դարձեալ նոյն ամարանոցը եկաւ, և հոն քիչմը ալ նստաւ. և ապա ժամ 9 ին իր ծովեզերեայ պալատը գնաց։

## ԳՈՐԾՔ ԱՐՏԱՔԻՆ

*Յունիսի ամսոյն 1 էն՝ ... Լոնտրայի Պ... լուրերուն համառօտ թարգմանութիւնն է.*

---

Ապրիլի ամսոյն վերջը Պերոզելայ ընկած Պէլճիգայի արքայանիստ քաղաքը՝ այն երկրին մեծամեծներուն գլխաւոր ժողովին մէջը նէրկայ գտնուօղներուն՝ նոյն տէրութե արտաքին կառավարութեց տեսուչը՝ իր տէրութե այժմեան որպիսութիւնը և օտար տէրութեց հետ արտաքին կապակցութիւնը ծանուցանելու ատենը, հարկաւորեալ հրամանին կերպովը՝ այն միջոցները իրեն աւելի ծանրութի և նեղութի գալուն հմի խօսեր է։

Եւ 24 պայմանները բովանդակօղ պայմանագիրը՝ Լօնտրայի ժողովին երեսփոխաններուն կողմանէ մինչև ընդունված ատենը, նոյն միջոցը եղած բոլոր պատահմունքները համառօտ կերպով յիշեր է։ Եւ ապա յամի տն 1831 հոկտեմբերի 31 ին հինգ տէրութեց երեսփոխաններուն տըված յայտարար գիրը բացեր կարդացեր է։

Եւ նոյն թղթին մէջը հաստատված 24 պայմաններուն մէկ քանիին վրայ՝ Պէլճիգայի երեսփոխանը իր տէրութե կողմանէ խնդիր և աղաչանք ըրեր է, որ փոփոխութի և տնօրինութի մը ըլլայ։

Եւ հինգ տէրութեց երեսփոխաններն ալ՝ նոյն յայտարար գիրը տըվեր են, և իմացուցեր են. թէ ամենևին մէկ կերպով փոփոխութի և անօրէնութի ընելը անհնարին է։ Եւ ատկէց 'ի զատ անոնցմէ մէկ կանոնին գոնէ փոքր ինչ մասը փոխելու թոյլտըվութի տալու հինգ տէրութիւներուն կարող չըլլալնին իմացուցեր են։

Սատի Լէօփօլտօ ըսված անձին՝ Պէլճիգայի երկրին մէջը թագաւոր ըլլալուն՝ դաշնակից տէրութիւներուն կողմանէ ընդունվիլը ծանուցանօղ պայմանագիրը՝ յամի տն 1832 յունիսի ամսոյն 19 ին Պըրուսայի և Ինկիլթէրայի տէրութիւնները ընդուներ և հաստատեր են։

Այս Պէլճիգայի երկրին ինքնագլուխ կառավարութիւնը և արտօնութիւնը հաստատօղ նոյն պայմանագիրը՝ վերջինշէլ երկու թագաւորները ընդունելու պարտաւոր եղած են։

Եւ ապրիլի ամսոյն 6 ին Լօքսէնպուրկի տուգայութը համար մէկ քանի որոշակի գրվածները յայտնի ըլլալով, Նէմճէի և Պրուսի տէրութիւներուն վկայականները փոփոխակի տղերնին կատարվեր է։

Նմանապէս նոյն ամսոյն 22 ին՝ պայմանագրերին ուրիշ տեղերուն վերաբերեալ մէկ քանի որոշ գրվածները բովանդակօղ՝ Ռուսի տէրութե վկայականը փոփոխակի տրվեր է։

Եւ Պէլճիգայի երեսփոխանը կանոնական վկայականները ընդունելու՝ իր տէրութենէ կողմանէ հրաման չունէր. անոր համար այս կերպ վկայականները ընդունելովը՝ իր տէրութե հրամանէն և պատվէրէն սահմանէն դուրս ելեր էր։

Եւ Պէլճիգայի երկիրները մինչև որ կատարելապէս չըպարպվի, Պէլճիգայի տէրութիւը՝ պայմանագրին մէկ փոքր մասին վրայ խորհրդակցելու ամենևին համաձայնութի չըտար։ Եւ եթէ նոյն երկիրները պարպըվելու ըլլայ, համաձայնութի պիտի տայ. և այս դժուարութիւը հիմա պիտի ընէ։

Եւ Թօրուն ըսված Պէլճիգայի պաշտօնատարը՝ որ Հոլէնտիացիները յառաջմանէ բանտարկելով անարգեր էին, նոյն

քանին վրայ ալ վերոյիշեալ արտաքին կառավարութեց տեսուչը՝ շատ խորհրդակցութիւններ ըրաւ ։

Եւ այս բանիս համար տէրութե կանոնով ձեռնամուխ ըլլալու բոլոր անհրաժեշտ պատրաստութիւնները՝ եթէ ըստ արժանոյն մէկ պտուղմը յառաջ չըբերէ, այն ատենը երկիրը մէկ ուրիշ ձեւմը գտնելու առաւել կանոնմը ընտրելէն՝ ուրիշ հնար չըլլալը յայտնելով խօսքը վերջացուց ։

Այս ժողովին մէջը գտնվողներուն շատը մէկ մէկու ետեւէ խօսիլ սկսան ․ թէ Պէլչիգայի թրուէր 24 հաստատած պայմանները ընդունելու երբոր հաճոյին տըվաւ, նոյն պայմանները մէջտ անդրդուելի ըլլալուն հաւատալով հաւանութի տուած է ։

Եւ Պէլչիգայի երկիրը այս կերպ կարծիքի մէջ ձգելէն ազատելը պէտք է ․ եւ այս բանիս վրայ ձեռնամուխ ըլլալու հարկաւոր եղած պատճառներուն եւ պատրաստութիւններուն ՚ի գործ դրվիլը երկրի մեծամեծներուն պարտքը ըլլալը յայտներ են ։

Եւ Լոնտրայի ժողովին մէջը հրամանատար եղօղ՝ Պէլչիգայի երեսփոխանը՝ իրեն յանձնված պաշտօնին չափէն դուրս ելլալուն համար՝ իր պաշտօնէն հանելը եւ հոս բերվիլը հարկէ ըսելով, միաբան մէկ տաքնալով եւ բարկանալովմը՝ բանին որպիսութիւնը խնդրեցեր են ։

Եւ նախայիշեալ ժողովի մեծամեծներէն մէկը՝ այս բաները բովանդակօղ ստորագրված յայտարար գիրմը՝ արքային դըրվելու համար առաջարկեց ։

Եւ ուրիշ անձմըն ալ աւելի աղդու խօսքերով թուղթմը առաջարկեց, որ մէջը եղած միտքը այս էր ․ թէ այսուհետեւ Պէլչիգայի տէրութիւնը՝ Լոնտրայի ժողովին հաւատարմութի չըներով, պատերազմելէն ուրիշ ճար եւ հնար չըլլալը կը հաստատէր ։

Այս միջոցները Պէլչիգայի տէրութե կողմանէ Լոնտրայի ժողովին տրվելու համար՝ նոյն տէրութե մեծամեծներուն գիտութեը՝ արքային ձեռագրովը հաստատված եւ ապրիլի 29 ին գրված սովորական մէկ յայտարար գրով՝ վերոյիշեալ թուղթերը գրելու պաշտօնատարներուն մայիսի 2 ին աւետարարութի եղաւ ։

Պէլչիգայի թրուէր վերոյաբերեալ հաստատած պայմանագրին ուրիշ մէկ պայմանը որ խորհրդակցելու կարօտ չէր, նոյն պայմանը մինչեւ ՚ի գործ դնել չըկրցվի, թէ՝ Պէլչիգայի տէրութեը առանց այլայլութեան կցորդ ըլլալու տեղերը մինչեւ որ կատարեալ չըպարպվի, նոյն տէրութիւը ուրիշ խօսակցութեմը եւ խորհրդակցութեմը՝ չըկրնալը վճռեր էր ։

Եւ Պէլչիգայի տէրութե գիրը՝ նախայիշեալ ստորագրութե խըրկվելու յայտարարութե գիրը պատրաստելու հրամանատար եղօղներուն քովը՝ անանկ զօրաւոր երեւցաւ՝ որ նոյն իրենց յիշեալ յայտարար գրին մէջը միայն թէ հիմն եւ սկիզբն եղած պայմանին գիտաւորութիւը բացայայտել բաւական համարեր են ։

Եւ նոյն օրը՝ յիշեալ ստորագրված յայտարար գիրը երկրի մեծամեծներուն ժողովին մէջը քննըվեցաւ ․ եւ ապա ամենուն միաբանութեը հաւանութի տալով ընդունվեր է ․ եւ միւս օրը արքային տըրվեր է ․ եւ արքային կողմանէ ալ՝ նոյն ստորագրըված յայտարար գրին պատասխանը տըրվեր է ։

—

### Պէլչիգայի արքային կողմանէ տըրված պատասխանագրին օրինակն է ։

Դուք որ այս երկրին գլխաւոր ժողովոյն խորհրդականներն էք, այս անգամ ինձ մատուցած ձեր յայտարար գրոյն մէջը որ միաբանութե ձեր բարի գիտաւորութիւնները բացայայտեր էիք, խիստ հաճեցայ ։

Պէլչիգայի ազգը իմ թագաւորութեա ապահովութի եւ հաւատարմութի ունենալը՝ իրաւի վերահասու ըլլալս յուսալով, նոյն հաւատարմութիւը ներկայ եղած վիճակիս համեմատ ըլլալը հաստատելու եւ ճշմարտելու կարօղ եմ ։

Պէլչիգայի ազգին նախասահմանութեն ՚ի պաշտպանելու յաջողութեը եւ ձախորդութեը համար՝ անձըս դնելս, եւ անոր շահը իմ

շահու պէս համարել՝ Պելճիգացիները աղէկ գիտցած են ։

Այժմեան խորհրդականութիւն եղած նիւթուոր բաներուն կարգադրութեան վերայ կանոնները որ երկրիս մեծամեծներուն ժողովին կողմանէ ծանուցված էր, նոյն կանոնները ձեզի տրված վերջին սուլթանական թղթերէն յառաջ՝ իմ ձեզի ըրած պատուէրներուս յարմար և Լօնտրայի ժողովին խմացուցած կանոններուն կատարեալ համեմատ ըլլալը՝ հիմա ձեզի հասկցնելու կարօղ ըլլալս խնդութեան պատճառ եղած է ։

Պելճիգայի ազգը իր նախկին համբաւը և փառքը տեղը պահելու համար՝ ունեցած ջանքին և փափաքին մէջը միշտ հաստատ ըլլալը, և խոհեմութիւնը ամենուն հետ կայելով՝ իր մշտնջենաւոր ազատութիւնները եթէ հարկը բերէ պատերազմաւ ալ հաստատելու և պահպանելու կարող ըլլալը յայտնի է ։

Եւ այս բանը Եւրոպայի տէրութիւններուն առջևը հաստատելը մինչև հիմա մնացած դժվարին կապերը բացվելուն և արձակվելուն շուտով ձեռնհաս ըլլալու աւելի զօրաւոր պատճառն է ։

Երկրիս գլխաւոր ժողովոյն մեծամեծները՝ երկրիս այժմեան վիճակին աղէկ տեղեակ ըլլալնին, և մէկ ազգին մշտնջենաւորութիւնը և ներքին հանդստութիւնը վերաբերեալ ներկայ խօսքերէն՝ ամէն կերպ առաջարկութիւնները ոչինչ նեղութի համարելու գիտաւորութիւնին խմացեր և ուրախացեր եմ ։

Ասոր այս բանիս վրայ՝ ձեր միտքը իմ մտացս համեմատ ըլլալով, ձեր աղէկ գիտաւորութիւնը մէջը եղած խնդրվածքին և կամեցողութիւնը կատարմանը՝ դիւրին եղանակաւ յառաջ գալու, և ձեր կողմանէ խորհելու համար՝ մէկ քանի կանոններ այս մերձ օրերս ձեր խորհրդականութեան ժողովին տրվելու հրաման և պատվէր պիտի ընեմ ըսելով խօսքը վերջացուցեր է ։

Այս պատասխանագրին կարդացվիլը երբոր լմնցեր է, ամէն հոն ներկայ գտնըվողք և լսողները՝ խիստ [illegible] բարեմաղթութիւններ ընելնին, և այս պատասխանին խիստ հաւանութիւն տալերնին, Գազէթաներուն մէջը գրված է ։

---

[illegible]

[illegible]

---

Գերեթօթ ըսված Անգղիացի (Ինկիլիզ) վարպետմը մէկ թուլումպայի գործիքմը հնարեց, որ անոր թէ գործածութիւնը՝ և թէ ջուրը բոլոր պէտք եղած տեղերը ուղղակի հասցնելու համար՝ միայն երկու մարդ բաւական է ։

Եւ նոյն գործիքին կրակը մարելու ըսված րոպէէն՝ մինչև նոյն գործքին զօրութիւնը կատարեալ պէտք եղած աստիճանը հասնելուն՝ 18 րոպէէն աւելի ժամանակի կարօտ չէ ։

Եւ այն մաւէլի նիւթերուն ծախքը 1 ժամին 88 փարայէն աւելի չըլլար ․ և ասանց ասանկ ըլլալը փորձով հաստատվեցաւ ։

Եւ այս գործիքը շատ վարպետութի ունենալէն 'ի զատ՝ կատարեալ սուղ և պարզ ձևմը՝ և գիւրութ գործածութիւնը՝ և աւելի զօրեղ զարնվածքմը ունենալուն պատճառաւ, շատ զարմանալի և տեսնալու արժան բան եղած է ․ մինչ զի միայն մէկ ժամի մէջ քառասունակայ ելայ ջուր առնող՝ 40 փըչի ջուրը՝ կէս բութ մասի հաստութիւն ունեցող մէկ ծակէն՝ 90 ոտք, կամ՝ 45 կանգունի չափ բարձր տեղի մը սահեցնելով կրնայ նետվիլ ։

Եւ թուլումպայի խօլթումին ջօնուն՝ որքան հաստ և ծակը լայն և բաց ըլլայ, նետված ջուրին չափ՝ այնքան մը ալ աւելի ըլլալը կըհարկաւորի․ ինչպէս օգը մեզի եղած ատենը, յիշեալ թուլումպայով նետված ջուրը՝ 140 ոտք՝ կամ 70 կանգուն հեռաւոր միջոց ունեցող տեղի մը հասնիլը տեսնվեցաւ ։

Նմանապէս Անկլիթէրայի Հարթէֆօրթ քաղաքին մէջը այս անգամ նորէն արևային խոշորացոյցմը հնարւեցաւ. մինչ զի լուն (փիրէն), և մրջիւնը (խարինճան) և առհասարակ ասոնց նման փոքր բաները մարդու աչքով տեսնըւած մեծութենէն՝ չորս միլիոն, այսինքն՝ քառասուն անգամ հարիւր հազարէն աւելի մեծ կերեցընէ. և ասկէ 'ի զատ նոյն գործիքով՝ եթէ մէկ քանի կաթիլ քացախի վրայ նայվի, հինգ կանգուն երկայնութի ունեցող որքան օձաձուկեր (երլան պալըղներ) նոյն կաթիլներուն մէջը լողալնին կըտեսնըվի։

---

## ԱՒՏԱՐԱՑ ԼՈՒՐ

Ասկէց քիչմը յառաջ Գերմանայի Ճեթլենուէլ ըսված քաղաքին մէջը՝ 88 տարեկան կինմը մեռեր է։

Այս կինը երբ 37 տարեկան երիտասարդութէ առենը յղի եղեր է. և ամէն պարագայով յղութեան նշանները իր վրայն տեսեր և առուգեր է։

Ետևերը ազատբերքին ցաւերուն բռնած առենը հասեր է. նայիս որ յանկարծ նոյն ցաւերը կըդադրվեր, և փորին մեծութին ալ անցեր է. բայց կինը իր վրայ խալենսին տարակուսութի չունենալով՝ ուզ կըխօսէ թէ ես յղի էի. վերջապէս կտակ կընէ որ մեռնելէն յետոյ՝ փորը բանան նային։

Հիմա նոյն կինը մեռեր է. և անոր կըտակը տեղը տանելու համար՝ փորը կըբանան կընային, որ վիրաւի հասառութեը և ծակոտութեը պատճառաւ չափահաս ըլլալը ստուգվելով, բոլորովին ոսկոր կըտրած ամէն մասունքը՝ և անդամները լման երախայ մը փորին մէջը կըգտնվի։

Ասանկ նոյն կինը որ իր յղութէը ստոյգ ըլլալուն վրայ հաստատ կեցած էր, հիմա անոր յղութէը հաստատվեր է։

---

Ռուսի կայսրը իր գլխաւոր ժողովոյն մեծամեծներուն մայիսին 5 ին գըրված հը ըսմանագիրմը խըրկեց. որ մէջը կըծանուցանէր, թէ ասկէց յառաջ յաղթութէ Վարշավ քաղաքը առնելով Լէհի խռովութիը բարձօղ Բէվանի կոմս (պէյ), և Վարշավի իշխան Փասքէվիչ սպարապետը Լէհի ալերուն մէջը իր կողմանէ բացարձակ բդեշխ կացուցած է։

Եւ նոյն սպարապետն ալ այս հիմկվան ուժանացած իշխանութէը՝ յամի տն 1832 փետրվարի 25 ին՝ Լէհի կարգադրութէը վերաբերեալ գրըւած կանոնագրքին քսան և երկրորդ պայմանին նայելով, Լէհի կառավարներուն ժողովոյն տեսուչ եղեր է։

---

Ֆրանսայի Թագաւորին Լուիզ ֆէրնէսսա ըսված մեծ աղջիկանը՝ այժմեան Պէլճիգայի Թագաւոր Լէօփոլտօին հետը այս մօտերս պսակվելու խօսքին կատարումը երևած ըլլալուն համար, մայիսի 16 ին Ֆրանսայի Թագաւորը իր ազգատոհմը հետը առած՝ Ֆրանսայի սահմանագլուխին մօտ Գոմփիէնեայէ ըսված քաղաքը գացեր է։

Ասոր Պէլճիգայի արքայն ալ՝ Պէրօգոլայէն նոյն քաղաքը գացեր է. և հոն երկու օրվան մէջը մէկզմէկու հետ տեսութի ընելէն յետոյ, ամէն մէկը իրենց արքայանիստ քաղաքը պիտի ետ դառնան։

Եւ Նէմցէի կայսրը իր Թագուհին հետ առած՝ Թիրեսթ երթալու դիտաւորութէ՝ մայիսի ս?կիզբին (սկիզբին) Պէշ քաղաքէն ելեր, և մինչև հիմա տեղէ 'ի տեղ ճանապարհորդ ըլլալով շրջիլը՝ Պայէթանէրուն մէջը գրըված է։

---

Ծանօթութ. Ասկէց յառաջ՝ թ 32 նումերոյով տըպված Լրոյ գրին հինգերորդ երեսին երկրորդ էջին 23 տողին մէջը (դեկտեմբերի 30) գըրվելու տեղը, սխալմամբ (դեկտեմբերի 35) գըրվեր է։ Թէպէտ յայտնի է ամէնուն, որ 31 էն աւելի ամսոյ թիւ չունինք. բայց մի՛ տարակուսեալ միտացէն ընթերցողքն զայն, թէ արդեօք յիշեալ ամսոյ թիւն քանի լինել պարտ է. վա՛յ 'ի միամտութէ այսօցին՝ ասա զուգիւն աղէ առնեմք։